



ՃՐՄՁԻՄՔ ԺՄՁՁՁՁՁՁՁՁՁՁ ԻՃՁՁՁՁՁՁՁՁ Գ ՊՁԻՁՁՁՁՁՁՁ ՄՁԷՁՁՁ
ԾՁՉՁՁ

734-Ա/Ք

20.08.2015թ.:

«ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», «ԲՆԱԳԻՏԱԿԱՆ («ՖԻԶԻԿԱ», «ՔԻՄԻԱ», «ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ») ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ԴԱՍՎԱՐՆԵՐԻ՝ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ՝ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 106 Ա/Ք ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1579-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետի իզ) ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Բնագիտական /»Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն»/ առարկաների և դասվարների՝ «Լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթի անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2011 թվականի փետրվարի 15-ի՝ ««Հայոց եկեղեցու պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», Բնագիտական «Ֆիզիկա», «Քիմիա»,

«Կենսաբանություն» առարկաների ուսուցիչների հանրապետական մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» N 106 Ա/Ք հրամանը:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ.Մկրտչյանին:



ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

**«ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅՈՑ
ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», ԲՆԱԳԻՏԱԿԱՆ («ՖԻԶԻԿԱ», «ՔԻՄԻԱ»,
«ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ») ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ԴԱՍՎԱՐՆԵՐԻ՝
«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ»
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ԿԱՐԳ**

1. «Լավագույն ուսուցիչ» մրցույթն անցկացվում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով՝ «Հայոց Եկեղեցու պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», բնագիտական («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն») առարկաների ուսուցիչների և դասվարների միջև:
2. Մրցույթի անցկացման նպատակն է նպաստել հայոց ազգային դպրոցում մանկավարժի դերի նշանակության բարձրացմանը՝ ազգի սերունդներին կրթելու, դաստիարակելու գործում՝ բացահայտելով առարկայական խորը պատրաստվածություն ցուցաբերած, տաղանդաշատ, ստեղծագործական աշխատանք կատարող ուսուցիչներին, տարածելով նրանց մանկավարժական և մասնագիտական առաջավոր փորձը, խթանելով հասարակության մեջ ուսուցիչ-մանկավարժի հեղինակության բարձրացումը:
3. Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ 1-ին՝ (ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության, ոչ պետական, մարզային ենթակայության, Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներ) և 2-րդ՝ հանրապետական:
4. Մրցույթը հայտարարվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից տրված համապատասխան շրջաբերականով: Մրցույթի մասին տեղեկատվությունը տարածվում է հեռուստատեսությամբ, մամուլով և համացանցով:

5. Մրցույթի 1-ին փուլն անցկացնելու համար, ըստ ենթակայությունների, ձևավորվում է հանձնաժողով:
6. Հանձնաժողովի անդամների թեկնածություններն առաջադրում են ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթության վարչությունը, մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) կրթության վարչությունները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնն ու թեմի առաջնորդարանը, հաստատում է ՀՀ կրթության և գիտության նախարարը, մարզպետը (Երևանի քաղաքապետը):
7. Մրցույթի 1-ին փուլին մասնակցելու համար մինչև **օգոստոսի 30-ը** ուսուցիչները մարզային (Երևանի) կրթության վարչություններ են ներկայացնում դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից տրված երաշխավորագիր՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (*ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության ուսումնական հաստատությունների, ոչ պետական դպրոցների ուսուցիչները երաշխավորագիրը ներկայացնում են նախարարություն*), որտեղ նշվում է.
 - 1) ուսուցչի ավարտած ուսումնական հաստատությունը,
 - 2) որակավորումը,
 - 3) մանկավարժական աշխատանքի փորձը,
 - 4) տվյալ ուստարում ի՞նչ առարկա է դասավանդում (քանի՞ ժամ և ո՞ր դասարաններում),
 - 5) կոչումները (ե՞րբ է ստացել, ու՞մ կողմից, առկայության դեպքում), տարակարգը (առկայության դեպքում),
 - 6) ելույթները գիտաժողովներում (առկայության դեպքում)
 - 7) հրատարակած հոդվածները (առկայության դեպքում)
 - 8) տվյալ առարկայի օլիմպիադաներին ուսուցչի սաների ունեցած հաջողությունները:
8. Մինչև **սեպտեմբերի 10-ը** ընկած ժամանակահատվածում ներկայացված փաստաթղթերի հիման վրա 1-ին փուլի հանձնաժողովը մրցութային յուրաքանչյուր առարկայից ընտրում է առավելագույնը երեք ուսուցչի և, համապատասխան արձանագրությամբ, երաշխավորում նրանց մասնակցությունը մրցույթի հանրապետական փուլին:
9. Մրցույթի 1-ին փուլի արդյունքներն ամփոփվում են կազմկոմիտեի կողմից՝ 5 աշխատանքային օրերի ընթացքում:

10. Մրցույթի 2-րդ՝ հանրապետական փուլն անցկացնելու համար ձևավորվում է կազմկոմիտե և հանրապետական գնահատող հանձնաժողով:

11. Կազմկոմիտեի գործառույթներն են՝

- 1) մրցույթի հանրապետական փուլի կազմակերպումն ու անցկացումը,
- 2) մրցույթի արդյունքների ամփոփումը,
- 3) կազմակերպչական այլ հարցեր:

12. Հանրապետական գնահատող հանձնաժողովի գործառույթներն են՝

- 1) հարցաշարերի կազմում,
- 2) տվյալ առարկայի մրցույթի անցկացում,
- 3) արդյունքների ամփոփում և կազմկոմիտեին ներկայացում:

13. Կազմկոմիտի կազմում ընդգրկվում են երկու ներկայացուցիչ Մայր Աթոռից, երեքը՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունից:

14. Հանրապետական գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀՀ կրթության և գիտության նախարարության առանձնացված ստորաբաժանումների ներկայացուցիչներ, կարող են ընդգրկվել ուսուցիչներ, կրթության ոլորտի փորձագետներ:

15. Կազմկոմիտեի և Հանրապետական գնահատող հանձնաժողովի անվանական կազմերը հաստատում է ՀՀ կրթության և գիտության նախարարը:

16. Մրցույթի հանրապետական փուլի մասնակիցներին տրվում է ուսուցչի ստեղծագործական, մանկավարժական և մասնագիտական կարողությունները գնահատող թեստային առաջադրանք: Թեստային առաջադրանքի անցումային շեմը հաղթահարող մասնակիցներն, ըստ առարկաների, մասնակցում են հարցազրույցի: «Լավագույն ուսուցիչ» մրցույթի հանրապետական փուլի գրավոր՝ թեստային աշխատանքը, գնահատվում է 20 միավորանոց սանդղակով: Մրցույթի բանավոր փուլին կարող են մասնակցել թեստային առաջադրանքից 15-20 միավոր հավաքած ուսուցիչները:

17. Գրավոր և բանավոր փուլերի արդյունքում հավասար միավորներ հավաքած մասնակիցների միջև ընտրությունը կատարվում է հանձնաժողովի անդամների փակ քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

18. Մրցույթի հանրապետական փուլի արդյունքներն ամփոփվում են հանրապետական հանձնաժողովի կողմից և, մինչև **հոկտեմբերի 25-ը**, հաստատվում ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթական վարչության պետի ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրենի կողմից:

19. Մրցույթի հանրապետական փուլում հաղթած ուսուցիչները պարգևատրվում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցող հանդիսավոր մրցանակաբաշխության ժամանակ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Հայաստանի Հանրապետության կրթության ու գիտության նախարարի կողմից:

20. Պարգևատրման արարողության շրջանակներում մասնակցության հավաստագրեր են տրվում նաև մրցույթի հանրապետական փուլի մասնակիցներին: